ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

21 դեկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/4

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 10 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սերգեյ Հարությունյանը, Սերգեյ Ներսեսյանը, Գայանե Մելքոմ Մելքոմյանը, Երևանի քաղաքապետի խորհրդական Արթուր Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, լրատվության վարչության պետ Իոսիֆ Կուբատյանը, բնապահպանության վարչության պետ Գևորգ Նազարյանը, տրանսպորտի վարչության պետ Էդգար Գալստյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Վահագն Գրիգորյանը:

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը տեղեկացրեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Հաշվի առնելով, որ Երևանի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 21-ի նիստին ներկա է ավագանու 10 անդամ, ուստի՝ նիստն իրավազոր չէ և քվորում չի ապահովվել, հետևաբար, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի

հունիսի 18-ի N 1-Ն որոշման հավելվածի 114-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հայտարարվեց 30 րոպե տևողությամբ ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 11.38-ին:

Հաշվի առնելով, որ 2021 թվականի դեկտեմբերի 21-ի նիստին ներկա են ավագանու 11 անդամ և նիստն իրավազոր չէ, ուստի՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման հավելվածի 114-րդ կետի 2-րդ ենթակետը՝ նիստը համարվում է չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն.Ղուկասյանը